Հուսիկ Արա

Աստծու սխալը

Իմ ապրելու իրավունքն էիր.
հիմա առանց քեզ ժամանակ է:

Սեր ու սաղմոս խառնվել է իմ ներսում.
և չգիտեմ՝ դո՞ւ ես մեղքը,
թե՞ ես եմ ըստ պահանջի մեղավոր:

Սիրուց ատելություն կես քայլ է,
որ անցել եմ ես.
ատելությունս սեր է դարձյալ:

Իմ գազանն ես,
ոխերիմն ես
ու թշնամին.
սիրում եմ քեզ:

Ինձ հոշոտել,
պատառել ես
մաս-մաս վատնել.
ու սիրում եմ քեզ:

Իմ դատավճիռն ես՝
ցմահ բանտարկություն՝
առանց ներման ու շնորհի.

իմ մահվան բոլոր ձևերն ես փորձել,
նորից սիրում եմ քեզ:

Ու տանելու ես դեռ՝
ինչը չես թողել.
այն կյանքում էլ տրվող
անդորրն եմ քեզ պարտք
ու խաղաղությունը մեծ.
և դարձյալ սիրելու եմ՝
արդեն դրախտ կամ դժոխքում:

Աստված սխալվեց,
երբ իմ կողից ստեղծեց քեզ.
բայց ես այլ տեղ չեմ էլ փնտրում ճիշտը: